

ԸՆԴԴԻՄԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԹԱՄԱՐԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻ «ԼԵՎՈՆ ԲԱՇԱԼՅԱՆԸ ԱՐԵՎՍՏԱԶԱՅ 80-ԱԿԱՆՆԵՐԻ ԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ», ԹԵԿՆԱԾՈՒՄԿԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թամարա Անդրեասյանի «Լևոն Բաշայանը արևմտահայ 80-ականների գրական շարժման համապատկերում» ատենախոսության նպատակը, ինչպես և նշված է սեղմագրում, Լևոն Բաշայանի՝ նշված շրջանի արևմտահայ իրապաշտական շարժման ականավոր դեմքերից մեկի, ազգային-գրական գործունեության և ստեղծագործական ժառանգության ամբողջական գիտական քննությունն է: Հիմնախնդիրը պայմանավորված է նրանով, որ ի տարբերություն 80-ականների իրապաշտ սերնդի տաղանդավոր ու ինքնատիպ այլ ներկայացուցիչների՝ Ա. Արփիարյանի, Գր. Զոհրապի, Հր. Ասատուրի, Միպիլի, Ա. Չոպանյանի և այլոց, Լ. Բաշայանի կյանքն ու գործը համեմատաբար քիչ է հետազոտվել գրականագիտության կողմից: Ըստ ատենախոսի, ցայսօր հրապարակի վրա են «ընդամենը երկու մենագրություն և մի քանի հոդվածներ», : Լիովին ուսումնասիրված չեն Լ. Բաշայանի՝ «պարբերական մամուլում սփռված հրապարակախոսական, գրական-տեսական հոդվածները, գեղարվեստական արժեք ունեցող մի շարք գործեր դուրս են մնացել գրողի՝ մինչև հիմա հրատարակված ժողովածուներից», /սեղմագիր, էջ 3/:

Պետք է ասել, որ ատենախոսության հեղինակը զգալի հետազոտական աշխատանք է կատարել առաջադրված կարևոր այդ նպատակի իրագործման ուղղությամբ, ինչը և կազմում է նրա ուսումնասիրության արդիականությունը: Ներածության և ենթագլուխներից բաղկացած երկու հիմնական գլուխներում հանգամանորեն քննվել են արևմտահայ գրական զարգացումների գործընթացում 80-ականների իրապաշտական գրական շարժման անհրաժեշտության հիմնավորման, այդ հոսանքի գրողների գաղափարական հայացքների ու գեղարվեստական ստեղծագործության վրա նշված շրջանի պատմաքաղաքական իրադարձությունների ունեցած ազդեցության, այդ համատեքստում Լևոն Բաշայանի գրական-լրագրողական գործունեության և ստեղծագործության առանձնահատկությունների հիմնախնդիրները: Ընդ որում, հիմնավոր ուսումնասիրության ենթարկվել և կարևորվել է Լ. Բաշայանի դերակատարությունը Կ. Պոլսի «Մասիս», «Արևելք», «Հայրենիք», պարբերականներում՝ նկատելով, որ «Ա. Արփիարյանի համբավը, այդ պարբերականների գլխավոր խմբագիր լինելու հանգամանքը հաճախ ստվերում էր Բաշայանի դերը և կատարած գործը», /սեղմագիր, էջ 15/: Նույնը պետք է ասել նաև Լոնդոնյան տարագրության շրջանում Արփի. Արփիարյանի հետ հրատարակած «Նոր կեանք», «Մարտ», պարբերականների մասին՝ հատկապես ազգային ճակատագրի հետ կապված հիմնախնդիրներին, Թուրքիայի և միջազգային այլ տերությունների կողմից հայ-թուրքական հարաբերությունների նկատմամբ վերաբերմունքին, նաև ներհայկական հարցերին նվիրված հոդվածների ու հրապարակային ելույթների վերաբերյալ: Դրանցում կան իրոք որ դասական արժեք և նույնիսկ արդիական նշանակություն ունեցող հատվածներ, որ, բնականաբար, չեն վրիպել ատենախոսի

ուշադրությունից: Ինչպես, օրինակ՝ անգլիական, այսպես կոչված, «Կապույտ գրքի», մասին. «Կապույտ գիրք»ը կը շարունակէ մեզի համար մնալ Կարմիր գիրքը որուն էջերը մեր արեան ցայտքերովը շառագունած են, ու Սեւ գիրքը, ուր մեր ակերակներուն ու կործանումներուն տրտմութիւնը կը խտանայ, /էջ 65/: Կամ՝ հայոց կյանքի բարենորոգումների մասին՝ «...բարենորոգումներ ուրիշներէ պահանջած ստեննիս, պետք է նաեւ մենք զմեզ ալ բարենորոգենք... Նոր մարդիկ ըլլանք, ու նորէն ծնի՛նք: Ահա՛ Հայութեան արդի մեծագոյն, կենսական պետքը», /էջ 67-68/:

Ատենախոսության գիտական նորությունների թվում նշվում են, որ առաջին անգամ անդրադարձ է կատարվել «Լ. Բաշայանի խմբագրությամբ Փարիզում 1928-1932 թթ. լույս տեսած «Լը ֆուայե», պարբերականին», , ինչը կարևորվում է գրողի հրապարակախոսական ու գրականագիտական հայացքների ամբողջացման տեսակետից, ինչպես նաև Լ. Բաշայանի ստեղծագործության գեղարվեստական ու գաղափարական վերլուծության փորձը՝ արդի գրականագիտական հայացքների կիրառմամբ: Պետք է նշել, որ կարևոր այդ խնդրի իրագործման մեջ գնահատելի է, մասնավորապես, «կերպարների հոգեբանության բացահայտման ժամանակ հոգեվերլուծական դպրոցի ներկայացուցիչների /Ֆրոյդի, Յունգի, Ֆրոմի, Ուորրենի, Աոնաուդովի և ուրիշների/ տեսական դրույթների կիրառումը, ինչը, ըստ ատենախոսի, «թույլ է տալիս առանձնացնելու գրողի կերպարակերտման արվեստի յուրահատկությունները», /սեղմագիր, էջ 4/:

Սեղմագրում հստակորեն տրված են նաև աշխատանքի ընդհանուր բնութագիրը, թեմայի գործնական նշանակությունը, տեսական և մեթոդաբանական հիմքը, կառուցվածքը, եզրակացությունները, օգտագործված գրականության ցանկը և այլն, որոնք համապատասխանում են ատենախոսության գլուխներում արծարծված իրողություններին ու գիտական չափանիշներին: Ըստ այդմ, ընդդիմախոսության շրջանակներում հիմնականում կանդրադառնանք մի քանի խնդիրների, որոնք, մեր կարծիքով, առավել արժանի են ուշադրության՝ աշխատության հետագա մշակումների և ատենախոսի ապագա հետազոտական գործունեության ընթացքում:

Սկսենք նրանից, որ, ինչպես նշում է ատենախոսության հեղինակը, 80-ականների սկզբին «Մասիս», շաբաթաթերթում թարգմանություններով, մի շարք ուսումնասիրություններով հանդես եկող», և գրական նկատելի ձիրքով օժտված պատանի Լևոն Բաշայանը նախ փորձելու էր պարզել ժամանակի գրականության արդի վիճակը, ընդհանուր պատկերը: Թերևս, նաև հենց իր ապագա ստեղծագործական ծրագրերը հստակեցնելու համար, նա 1886 թվականի սկզբին «Մասիս»,-ում /1 փետրվարի, թիվ 3807/ լույս է ընծայում «1885 տարին Թուրքիոյ հայ գրականութեան համար», վերլուծականը: Ատենախոսն արձանագրում է, որ «հայ գրականության շուրջ կատարած առաջին լուրջ գրական-տեսական վերլուծության», մեջ, «Քննության առնելով հրապարակի վրա եղած նյութերը՝ Բաշայանը մտահոգություն է հայտնում այն առիթով, որ հայ գրականությունը «բարեշրջման վիճակին մեջ չէ», , քանի որ «մատի վրայ կը հաշուին այն գործերը որք բուն «գրական», են», /էջ 27/: Հոդվածը դրական արձագանքների է արժանանում, այդ թվում՝ Եղիա

Տեմիրճիպաշյանի և Արփի. Արփիհարյանի կողմից: Այդ շրջանում արդեն մեծ համբավի տեր Ե. Տեմիրճիպաշյանի կարծիքն ավելի քան ոգևորիչ էր. „Քաջ հայագետի մը գրուածն էր,- նկատում է նա,- հասուն մտքի ծնունդ էւ վարժ գրչի արդիւնք,, , ամիսսանք հայտնելով միայն նրանում դատող մտքի հետ երագող մտքի պակասի համար: Կարծում ենք, սակայն, տվյալ դեպքում կարևոր էր ընդգծել նաև Եղիա Տեմիրճիպաշյանի սկզբունքային մեկ այլ դիտարկումը, որ վերաբերում է ժամանակի հայ գրականության զարգացման ընթացքին: „Սակայն լաւ կը դատէ՞ միթէ մեր նոր գրադատն, երբ կ'ըսէ. „Հայ գրականութիւնը զարգացման, բարեշրջման վիճակի մէջ չէ,, , գրում է նա: - Աւելի ճիշդ կ'ըլլար ըսել թէ Հայ գրականութիւնն յամր կը զարգանայ. Բարեշրջումն ալ արդէն ա՛յդ է,,: Իր այդ տեսակետը Ե.Տեմիրճիպաշյանը հիմնավորում էր նրանով, որ „Եւրոպական ազգաց գրական, քաղաքական, իմաստասիրական, գիտական հրատարակութիւնք, եւ լաւագոյններն ու բարձրագոյններն, այսօր կը տեսնուին Հայ հրատարակագրաց գրասեղանին վրայ: Հնա՞ր էր որ Հայ միտքն՝ ուստի եւ Հայ գրականութիւնն՝ այդ Եւրոպական մատենագրութեանց ազդեցութեան ներքեւ չը բարեշրջէին, չը զարգանային,,:

Խնդիրը կարևորվում է նրանով, որ նշված շրջանին վերաբերող տեսական վերլուծականներում բավական երկարատև մի շրջան արմատավորվել էր՝ գաղափարախոսական նկատառումներով, արևմտահայ գրական ընթացքի ամբողջական շրջաններ ու դեմքեր հանիրավի դուրս թողնելու մտայնությունը, որը, մեր կարծիքով, խաթարում էր զարգացման բնականոն պատկերը, ինչին և հղում էր անում Եղիա Տեմիրճիպաշյանը՝ առարկելով Լևոն Բաշայանին: Խնդիրը, անշուշտ, առնչվում էր նաև մեթոդական տարբերություններին: Լևոն Բաշայանը սկզբից իսկ նվիրվել էր իրապաշտական շարժմանը, մինչդեռ Ե. Տեմիրճիպաշյանն իր էությանմբ երագի, անպարփակելի հոգեկան տարածքների, տառապանքի կրողն էր: Պատահական չէր, որ „Արեւելք,,-ում /1887, թիվ 1154/ տպագրած իր մի հոդվածում՝ նվիրված Հովհ. Հովհաննիսյանի Մոսկվայում լույս տեսած „Բանաստեղծություններ,, ժողովածուին, Լևոն Բաշայանը՝ իր տեսակետները հաստատելու համար, հղում էր անում նաև Եղիա Տեմիրճիպաշյանին: Մեջբերելով Հովհ. Հովհաննիսյանի տողերը՝ „Ա՛խ տուէ՛ք ինձ քաղցր մի քուն, // Կեանքից հեռո՞ւ սըլանամ // Այն աշխարհը, ուր խնդութիւն, // Ուր սէրն է միշտ անթառամ,, , գրում է, թէ „Ճիշդ տեղն է յիշատակել մեր մէջ դարուս հիւանդութեան անբաղդատելի երգչին՝ Տեմիրճիպաշեանի սա խօսքերը. „Եւ տառապանքն արդի կենաց պայմանն է՛...,,: Պատահական չէր նաև Լ. Բաշայանի այդ հոդվածի արտատպությունը Ե. Տեմիրճիպաշյանի խմբագրած „Երկրագունտ,, հանդեսում /1887, թիվ 11-12/: Ավելին՝ հատկանշական է այդ առումով ուղիղ տասը տարի անց՝ 1895 թ., ապրիլի 10-ին Լևոն Բաշայանին ձոնած „Պարտեալն,, քերթվածը, ուր Ե. Տեմիրճիպաշյանն արդեն առավել որոշակիորեն արձանագրում էր իրենց ներաշխարհային մոտեցումների տարբերությունը, գրելով՝ „Յաղթանակը՝ փառքը, Լեւո՛ն, այդ է սո՞ւտ. // Ճըշմարիտը տառապանքն է, միա՞յն անի...,,:

Նույնը պետք է ասել նաև Գեղեցիկն ու Տգեղը գրականության մեջ արտացոլելու

անհրաժեշտության խնդրի մասին: „Ե՛վ Բաշայանը, և՛ Ջոհրապը առաջարկում էին գրականության ու իրականության կապը դարձնել անխզելի, /.../ գրականության համար նյութ դարձնել ոչ միայն գեղեցիկը, վեհը, այլ նաև՝ տգեղը, ստորը, /էջ 29/: Բնականաբար, նման մոտեցումը բխում էր „կյանքն ինչպես որ է,, արտացոլելու իրապաշտական գրականության հիմնարար սկզբունքից: Սակայն այս ասելով, մեր կարծիքով, անհրաժեշտ էր անդրադառնալ նաև եվրոպական խորհրդապաշտական գրականության մեջ /սկսած Բողլերից/ մշակված ու նաև արևմտահայ պոեզիայում իր արձագանքները գտած /հատկապես Ե. Տեմիրճիպաշյանի ստեղծագործության մեջ/, այսպես կոչված, Տգեղի գեղագիտությանը: Ի դեպ, այս հարցում ևս Ե. Տեմիրճիպաշյանը ելնում էր իրականության բարեշրջային զարգացման տեսությունից: Գտնելով, որ բարեշրջությունը ուղղագիծ՝ „վերելական,, ընթացք է, „Բարեշրջություն գեղեցկին,, ծրագրային հողվածում /„Մասիս,, , 1901, թիվ 11/ նա համարում էր, որ դրա ցայտուն ապացույցը գեղեցիկի զարգացման արդի փուլն է, ուր իշխում է տգեղը, իբրև գեղեցիկի բարեշրջության արդյունք:

**Նորավեպ** եզրույթի մասին: Հիշատակելով 1890 թվականին „Մասիս,,-ում Լ. Բաշայանի տպագրած „Հմայաթափ,, նորավեպը, ատենախոսը տողատակում ծանոթագրում է, որ առաջին անգամ այդ եզրույթը կիրառվել է Թագուհի Շիշմանյանի /Օրիորդ Մենիկ/ 1883 թ. տպագրված „Գարնան մի ասուպը,, գործի ժանրային բնորոշման համար /էջ 33/: Կարծում ենք, այս հարցի առիթով ևս պետք էր ավելի հանգամանորեն անդրադառնալ **նորավեպ** եզրույթի ստեղծման և կիրառման շուրջ 1901 թ. արևմտահայ մամուլում ծավալված բանավեճին, որին մասնակցել են մի շարք հայտնի դեմքեր /Կարապետ Յուրուճյան, Ռեթեոս Պերպերյան, Եղիա Տեմիրճիպաշյան, Գրիգոր Ջոհրապ և ուրիշներ/ և որի ընթացքում տարբեր վարկածներ են հնչել այդ խնդրի վերաբերյալ: Ի վերջո, ըստ էության բանավեճը հրահրած Ենուվք Արմենը՝ վավերական աղբյուրներ վկայակոչելով, հավաստիացրել է, որ „**նորավեպ** բառը հեղինակություն է Մեսրոպ Դավիթ Թաղիաղյանի որ 1849-ին Մխիթարյան տպարանն հրատարակված թերթի մը մեջ, առաջին անգամ գործածած է, գրելով սա նախադասությունը. „ըստ նորավեպի Սըր Վալդր Սկոտայ,, /տես՝ Գր. Հակոբյան. Արևմտահայ նորավեպը, Երևան, 1996, էջ 230/:

Ատենախոսության մեջ կան նաև մի շարք անճշտություններ ու լեզվական-սրբագրական վրիպումներ: Այսպես. ատենախոսը գրում է. „1888 թ., Մասիս,,-ում հանդիպում ենք Լ. Բաշայանի՝ Մկրտիչ Բարխուդարյանի „Հանդես գրականական և պատմական,, վերտառությամբ գրքի մասին կատարած „Գրական կյանք,, վերնագրով ուսումնասիրությանը...,, /էջ 31/: Ակնհայտ է, որ „Գրական կեանք,,-ը /ի դեպ, մեջ է բերված արևելահայ ուղղագրությամբ/ „Մասիս,,-ի համապատասխան բաժնի ընդհանուր խորագիրն է և ոչ թե Լ. Բաշայանի „ուսումնասիրության,, /ավելի ճիշտ՝ գրախոսական հողվածի/ վերնագիրը, որն է Մ. Բարխուդարյանի հրատարակած, ըստ էության, ոչ թե գրքի, այլ հանդեսի կամ ժողովածուի խորագիրը՝ „Հանդես գրականական և պատմական,,: Այս մասին նշում ենք , քանի որ նույնը կրկնվում է նաև նշված ժողովածուի 1890 թ. հրատարակված երկրորդ գրքի /այստեղ „գիրք,,-ը գործածվում է հատոր նշանակությամբ/ գրախոսության առիթով՝ „Գրական

սուրհանդակ, վերտառությամբ ուսումնասիրության մեջ Բաշայանը... /նույն էջում/:

Կ. Պոլսի „Երկրագունտ„ հանդեսը /նաև հղումներում/ մեջ է բերվում արևելահայ ուղղագրությամբ՝ „Երկրագունդ„ ձևով /էջ 15, 16/, Մելքոն Կյուրճյանի Հրանդ գրական կեղծանունը՝ Հրանտ ձևով, որն, ի դեպ, կարող է նաև շփոթվել Եղիա Տեմիրճիպաշյանի գրական առաջին կեղծանվան՝ Հրանտ-ի հետ /էջ 34/, Կ. Պոլսի Բերա թաղամասը՝ Բերիա ձևով /էջ 88/: Որոշ դեպքերում որոշակիություն չկա ժանրային պատկանելության հարցում. օրինակ, Լ. Բաշայանի „Դրացուհին„, „Երկու կիներ„, „Կաղանչեքը„, „Չարթոնք„ գործերը համարվում են ն՝ նորավեպեր, ն՝ պատմվածքներ: Կամ՝ „Երկու կիներ„-ը՝ պատմվածք, „Չարթոնք„-ը՝ նորավեպ /էջ 87, 88/:

Կան նաև սրբագրական վրիպակներ՝ եզակի-հոգնակի անհամապատասխանության, ձայնավորով սկսվող բառից առաջ ը-ի գործածման, տառերի բացթողման, հավելագրման /օրինակ՝ հանդիպվող, 22, 25 32 և էլի շուրջ մեկ տասնյակ էջերում/, կամ բառի իմաստը փոխող սխալի՝ օրինակ, մինչկուսակցական՝ փոխանակ միջկուսակցականի /էջ 60/, տիրություններ՝ փոխանակ տերությունների /էջ 72/ և այլն:

Ամփոփելով վերն ասվածը, կարծում ենք, որ Թամարա Անդրեասյանի «Լևոն Բաշայանը արևմտահայ 80-ականների գրական շարժման համապատկերում» ատենախոսության մեջ մեր կողմից նշված առանձին դիտարկումներն ու դիտողությունները հեշտությամբ շտկելի են: Ամբողջության մեջ աշխատանքը կարելի է գնահատել հաջողված, ինչը հիմք է տալիս հեղինակին՝ հայցելու բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

17.06.21թ.

ՊԵՏՐՈՍ ԴԵՄԻՐՃՅԱՆ  
Բան. գիտ. դոկտոր

Հասցրաւ բոլոր  
արձանագրութիւնսքս



Մ. Ղևոնդյանի

ՀՀ Ղևոնդյանի Վ. Արևելահայ  
խնամակալների ցուցակի գրադրված  
Լ. Պրահալյան